

## Գործողությունների Համընդհանուր Պլան

### **Հաղթել կանանց հետ միասին և հզորացնել քաղաքական կուսակցությունները**

Որպես քաղաքական կուսակցությունների առաջնորդներ, մենք ակտիվ քաղաքական զարգացումների և հզոր կուսակցությունների ստեղծման կողմնակիցներ ենք: Մենք համարում ենք, որ կանանց ճիշտ ներգրավումը այս գործընթացներում հաջողության հասնելու գրավական է: Ուստի, շեշտում ենք, որ քաղաքական կուսակցությունները պետք է դառնան առավել ընդգրկուն, թափանցիկ և ներկայացուցչական: Կանանց համար պետք է ստեղծել քաղաքական և քաղաքականության մեջ առաջատար դերեր ստանձնելու հնարավորություններ: Քաղաքական կուսակցությունները յուրահատուկ կազմակերպություններ են, որոնք առնչվում են հանրությանը հուզող հարցերի հետ և ձգտում են իշխանության, որպեսզի կիրառեն այն քաղաքականությունը, որը կլուծի հանրությանը հուզող խնդիրները: Ապագա քաղաքական ղեկավարների համար, քաղաքական կուսակցությունները ծառայում են որպես կրթական դաշտ և նշանակալի ասպարեզ են բացում հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը և հավասար հնարավորությունները երաշխավորելու համար:

Ներկայումս բազմաթիվ քաղաքական կուսակցություններ նախաձեռնում են անհրաժեշտ բարեփոխումներ, որպեսզի կարողանան լուծումներ առաջարկել անընդհատ երևան եկող խնդիրներին, որոնց թվին են պատկանում հանրության անտարբերությունը, անվստահելիության մթնոլորտը և մարդկանց մտահոգությունները անուշադրության մատնելը: Կանանց քաղաքական մասնակցությունն առանցքային է այս խնդիրների լուծման գործընթացում: Որոշ քաղաքական կուսակցություններ նպատակաուղղված աշխատում են կանանց դերի բարձրացման ուղղությամբ՝ կանայք որպես ընտրողներ, կուսակցության առաջնորդներ, ակտիվիստներ և ընտրովի պաշտոնների թեկնածուներ: Մենք ողջունում ենք այն կուսակցական առաջնորդներին, ովքեր աջակցում են մեզ, քանզի նրանց դերը, որպես առաջնորդների, առանցքային է այս խնդրի լուծման համար: Այնուամենայնիվ, գլոբալ առումով, կանանց հավասարությունը շարունակում է մնալ հեռահար նպատակ: Բազմաթիվ երկրներում և քաղաքական կուսակցություններում կանայք դեռևս մեկուսացված են որոշումների կայացման գործընթացից: Որոշ երկրներում կանայք զրկված են ընտրելու և ընտրվելու իրավունքներից: Իշխանություններում կանանց ներգրավվածության ցուցանիշը 15% է, մինչդեռ կանայք կազմում են աշխարհի բնակչության ավելի քան 50%-ը:

Որպես քաղաքական կուսակցությունների առաջնորդներ, մենք հաստատակամորեն նպաստելու ենք կուսակցության ներսում կանանց լիիրավ քաղաքական մասնակցության խոչընդոտների վերացմանը: Ինչպես նաև, քաղաքացիական հասարակության և ՁԼՄ-ների հետ համագործակցության միջոցով, մենք նպատակ ենք հետապնդում ձևավորել համապատասխան համընդհանուր քաղաքական մշակույթ: Մեր կուսակցությունները շարունակելու և կրկնապատկելու են կին ընտրողների հետ հաղորդակցումը ակտիվացնելու ուղղությամբ ջանքերի ներդրումը: Կուսակցությունները հավաքագրելու և ուսուցանելու են կանանց, որպես քաղաքական առաջնորդների, ակտիվիստների և թեկնածուների, տրամադրելու են ռեսուրսներ կին թեկնածուներին և ստեղծելու են հավասար պայմաններ կին և տղամարդ թեկնածուների համար: Քաղաքական կուսակցությունները պետք է նաև հասարակությանը իրազեկեն հասարակական ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների կիրառման կարևորության մասին:

Միևնույն ժամանակ, կանանց մասնակցության բարձրացումը նպաստում է հակակոռուպցիոն պայքարի իրականացմանը, քաղաքական կայունությանը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների նկատմամբ վստահելիության աստիճանի բարձրացմանը: Մենք վստահ ենք, որ կանանց մասնակցությունը կնպաստի քաղաքական կուսակցությունների

պատասխանատվության բարձրացմանը, նրանց գործունեության թափանցիկությանը և միասնականությանը: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքականության և հասարակական ոլորտում կանանց մասնակցության աճին զուգընթաց նվազում է կաշառակերությունը: Որքան շատ են կանայք մասնակցում քաղաքական կյանքին որպես ընտրողներ, քաղաքական կուսակցությունների առաջնորդներ, կամ իշխանական պաշտոնյաներ, այնքան հանրային քաղաքականության մեջ արտացոլվում են նրանց հուզող խնդիրները:

Մենք հիմնվում ենք երեք կարևորագույն փաստաթղթերի վրա, որոնք սահմանում են կանանց և տղամարդկանց հավասարության միջազգային չափանիշները և կոչ են անում քաղաքական և հասարակական կյանքում վերացնել խտրականությունը կանանց նկատմամբ: Այդ փաստաթղթերն են՝ “Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին կոնվենցիա” (CEDAW), ՄԱԿ-ի Պեկինի Գործողությունների Ծրագիր և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի Որոշում 1325: Քանզի մենք միավորվում ենք խոչընդոտների վերացումը քննարկելու համար, մենք կկենտրոնանանք հետևյալ հիմնադրույթների վրա.

## **1. Վերացնել քաղաքական մասնակցության, ընտրելու և ընտրվելու կանանց իրավունքների նկատմամբ կիրառվող սահմանափակումները:**

- Վերացնել այն բոլոր սահմանափակումները, որոնք հավասարապես չեն կիրառվում կանանց և տղամարդկանց նկատմամբ՝ կապված նրանց ընտրելու և ընտրվելու իրավունքների հետ, եթե դրանք կանանց քաղաքական մասնակցության բարձրացմանն ուղղված ժամանակավոր միջոցներ չեն հանդիսանում:
- Կիրառել անհանդուրժողականությունը քաղաքական բռնության ցանկացած ձևի, հատկապես կին ընտրողների, թեկնածուների և կուսակցական ակտիվիստների նկատմամբ բռնության և ճնշման դեպքերի նկատմամբ:
- Ապահովել կուսակցական կին ակտիվիստների, թեկնածուների և ընտրված պաշտոնյաների ֆիզիկական անվտանգությունը՝ ստեղծելով ապաստարաններ, ուր կին քաղաքական գործիչները և նրանց ընտանիքները կարող են ապաստանել վտանգի դեպքում:
- Ստեղծել մեխանիզմներ, որոնք կսատարեն և կպաշտպանեն կանանց, երբ նրանք զբաղեցնեն քաղաքական պաշտոններ և ձեռք բերեն ճանաչելիություն: Ուսուցանել կանանց ինչպես վարվել, երբ իրենք կամ իրենց ընտանիքի անդամները ՁԼՄ-ների կողմից ենթարկվում են գրոհի: Մշակել միջոցներ նման իրավիճակներում արագ արձագանքելու համար:

## **2. Բարձրացնել ընտրված կին պաշտոնյաների թիվը ազգային, շրջանային և տեղական մակարդակներում:**

- Ներառել կին թեկնածուների առաջընթացման դրույթը քաղաքական կուսակցությունների պաշտոնական քաղաքականության մեջ: Քաջալերել կանանց առաջադրելու իրենց թեկնածությունը ազգային, շրջանային և տեղական ընտրություններում՝ մշակելով կին թեկնածուներին հավաքագրելու, ուսուցանելու և աջակցելու ռազմավարական պլան:
- Հավաքագրել կին թեկնածուների և առաջադրել նրանց թեկնածությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:
- Մշակել կին թեկնածուների և ընտրված կին պաշտոնյաների պաշտոնական առաջընթացման մեխանիզմներ, այդ թվում ներառել կանանց՝ կուսակցության համամասնական ցուցակների առաջին հորիզոնականներում և առաջադրել նրանց թեկնածությունները այն ընտրատարածքներում, ուր հաղթանակը հավանական է: Կանանց քվոտայի բարձրացումը, որոշ հանգամանքներում, կարող է կարևոր դեր խաղալ, հատկապես այն տեղերում, ուր կանայք փաստացի մեկուսացված են քաղաքական համակարգից:

- Կին թեկնածուներին հատկացնել բավարար ֆինանսական միջոցներ: Կին և տղամարդ թեկնածուները, որոնք իրենց ընտրվելու հավանականությամբ նույն մակարդակի վրա են, պետք է հավասարաչափ օգտվեն կուսակցության ռեսուրսներից:
- Կին թեկնածուներին ուսուցանել կանանց խնդիրների վրա հիմնված հատուկ քարոզարշավային տեխնիկան, այդ թվում՝ քաղաքականության մշակում, բանավիճելու վարպետություն, ցանցի ստեղծում, շահերի պաշտպանության մեխանիզմներ, հրապարակախոսություն, ղեկավարում, ընտրագանգվածի հետ աշխատանք, ռազմավարական պլանավորում, դրամահավաք, վստահության ամրապնդում, և այլն: Անհրաժեշտ է ուսուցանել նաև ուղերձի մշակման և ՁԼՄ-ների հետ հաղորդակցման մեխանիզմները, որոնց միջոցով կին թեկնածուները հստակորեն կձևակերպեն իրենց ասելիքը, կբարձրանա իրենց պատրաստվածության և ինքնավստահության աստիճանը:
- Ստեղծել տվյալների բազա այն կանանց վերաբերյալ, ում թեկնածությունները կարելի է առաջադրել ընտրովի և նշանակովի քաղաքական պաշտոններում:
- Սատարել կանանց՝ զարգացնելով նրանց ունակություններն այն ոլորտներում, ուր սովորաբար տղամարդիկ են գործում: Կանայք պետք է կարողանան արհեստավարժ աշխատել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ բյուջետավորումն ու արտաքին հարաբերությունները:
- Մշակել ուսուցողական ծրագրեր, որոնք կնպաստեն բարձրաստիճան, ազգային և միջազգային մակարդակի կին ասպիրանտների, թեկնածուների և նորընտիր կին պաշտոնյաների օրինակելի մոդելների ստեղծմանը: Քաջալերել կանանց և տղամարդկանց, որպեսզի ուղղորդեն նորահայտ կին առաջնորդներին, հատկապես կուսակցության ներսում և դրսում նրանց ծավալած գործունեության մեջ:
- Ողջունել կանանց աճող մասնակցությունն այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են քաղաքական անցումային, խաղաղության հաստատման, ընտրական օրենսգրքի բարեփոխման գործընթացները: Կին առաջնորդները պետք է օգտվեն ընձեռված այս հնարավորություններից:
- Հնարավորինս կիրառել միջազգային լծակներ և կոնվենցիաներ՝ կանանց մասնակցության և ներկայացվածության աստիճանի բարձրացմանը նպաստելու նպատակով:
- Իրազեկել լրագրողներին կառավարության և քաղաքականության մեջ կանանց մասնակցության կարևորության մասին:
- Սատարել կին թեկնածուներին հաղորդակցման ոչ ավանդական և ստեղծագործ մեթոդների փնտրտուքի մեջ, հատկապես երբ կանայք առնչվում են կառուցվածքային խոչընդոտների հետ, ինչպիսին են, օրինակ, հանրային պետական լրատվամիջոցները:
- Աջակցել կին թեկնածուներին կրթվել կուսակցությունից դուրս և գտնել համախոհ կազմակերպություններ, որոնք կօգնեն տվյալ կին թեկնածուին ուղերձի տարածման գործում:

### **3. Քաղաքական կուսակցություններում ապահովել ազդեցիկ ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց զգալի թվաքանակ:**

- Ապահովել կանանց ներկայացվածությունը քաղաքական կուսակցությունների ներքին որոշումների կայացման և ղեկավարման մակարդակում:
- Մշակել քարոզարշավային պլան, որը կնպաստի քաղաքական կուսակցություններում կանանց գոնե 30% ներգրավվածությանը: Կին թեկնածուներին ներառել ցուցակների առաջին հորիզոնականներում և ապահովել նրանց ներկայացուցչությունը կուսակցությունների ղեկավարման և որշումների կայացման օղակներում:
- Կուսակցական ծրագրերում և մանիֆեստներում ներառել սեռական խտրականությունը արգելող դրույթներ: Կուսակցության և՛ կին, և՛ տղամարդ առաջնորդների հետ քննարկել կին ընտրողներին հուզող խնդիրները:

- Կուսակցության անդամներին բացատրել կանանց քաղաքական առաջնորդների պաշտոններում ներգրավելու կարևորությունը:
- Հիմնել հավասար հնարավորություններ ապահովելուն միտված հանձնաժողով, որը կդիտարկի և կվերահսկի կուսակցության կանոնակարգում նշված կանանց և տղամարդկանց միջև հավասարության պահանջների իրականացումը: Հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն մոտավորապես հավասար թվով կանայք և տղամարդիկ:
- Հստակ և համաձայնեցված ժամանակահատվածի համար մշակել ներքին քվտաներ՝ կուսակցության բոլոր մակարդակներում կանանց մասնակցությունը բարձրացնելու նպատակով:
- Կուսակցության սահմանադրության և կանոնակարգի մեջ ընդունել ժողովրդավարական և թափանցիկ կանոններ ու հետևել վերջիններիս պահպանմանը: Նպաստել թեկնածուների ընտրության գործընթացների թափանցիկությանը՝ մշակելով պարզ և հասկանալի ընտրական չափանիշներ:
- Կանանց մասնաճյուղերի, թևերի կամ միությունների հետ անցկացնել ուսուցողական ծրագրեր և տրամադրել նրանց ֆինանսական աջակցություն, որի արդյունքում կանայք կկարողանան զգալի ներդրում ունենալ կուսակցության քաղաքականության ու ծրագրի մշակման, ղեկավարների և թեկնածուների ընտրման գործընթացներում: Կուսակցությունները պետք է նաև կանանց մտահոգող հարցերը քննարկելու հնարավորություններ ստեղծեն, ուսուցանեն, համագործակցեն և զինեն կանանց քաղաքականության մշակման և շահերի պաշտպանության ունակություններով: Կանանց իրական մասնակցությունը ապահովելու նպատակով պետք է խոսքից անցնել գործի:
- Վերլուծել ընտրական համակարգերը և օրենսդրությունը՝ կանաց քաղաքական մասնակցությունը խթանելու կամ խոչընդոտելու համատեքստում: Մշակել պլան սահմանադրական, օրենսդրական և կանոնակարգային բարեփոխումների միջոցով եղած խոչընդոտները վերացնելու համար:
- Աշխատել կանանց նկատմամբ վստահելիության և նրանց գործունակության բարձրացման ուղղությամբ՝ նպաստելով կուսակցության ղեկավարների և կին անդամների միջև համագործակցության զարգացմանը:
- Կին ընտրողների հետ կապը սերտացնել՝ մշակելով հատուկ ուղերձներ կանանց մասին և կանանց համար: Կուսակցության կենտրոնական գրասենյակում ստեղծել տեղեկատվական բազա, ուր կպահվեն նյութեր կին ընտրողների հետ հաղորդակցվելու նախաձեռնությունների մասին:
- Քաջալերել Կուսակցական Միջազգային Միություններին՝ մշակելու այնպիսի ռազմավարություն, որը կմղի անդամ կուսակցություններին բարձրացնելու կին ակտիվիստների, թեկնածուների և ընտրված կին պաշտոնյաների թվաքանակը:
- Օգնել կուսակցության կին անդամներին, թեկնածուներին և ընտրված կին պաշտոնյաներին՝ մատչելի դարձնելով լրատվության այնպիսի ավանդական աղբյուրները, ինչպիսին են ռադիոն, տպագիր մամուլը և հեռուստատեսությունը: Նպաստել կին քաղաքական գործիչների և լրագրողների /հատկապես կին լրագրողների/ միջև հարաբերությունների զարգացմանը:
- Կուսակցության ուղերձը մշակելիս և կուսակցության խոսնակին ընտրելիս՝ օգտվել հասարակական այն ըմբռնումից, որ կանայք ազնիվ, շիտակ և հոգատար են:
- Կուսակցության և կառավարության ներսում կիրառել տեխնոլոգիաներ կանանց կարիքները հոգալու համար և իրազեկել վերջիններիս կառավարության քաղաքականության և ծրագրերի մասին:

**4. Քաջալերել կանանց առավել ընդգրկուն մասնակցությունը կառավարության որոշումների կայացման գործընթացում և պայքարել հանուն այն օրենսդրության, որը կապահովի կանանց և տղամարդկանց լիիրավ հավասարությունը:**

- Նպաստել կառավարական և այլ բարձրաստիճան պաշտոններում առավել մեծ թվով կանանց նշանակումներին: Հայտնաբերել փորձառու կանանց, որոնք կարող են հավակնել կառավարության բարձրաստիճան պաշտոններին և քաջալերել նրանց զարգացնելու հարաբերություններ և տղամարդկանց և կանանց հետ ի նպաստ իրենց հնարավոր նշանակման:
- Կին նախարարներին առաջարկել այլ ոլորտներ ևս՝ չսահմանափակվելով միայն սոցիալական ոլորտով:
- Նախապատրաստել կանանց իրականացելու իրենց պարտականությունները, որպես կառավարության ներկայացուցիչներ՝ կազմակերպելով ուսուցումներ, այդ թվում նաև առաջնորդության հմտությունների վերաբերյալ:
- Դրդել կանանց փնտրելու աշխատանք կառավարությունում և նպաստել նրանց առաջխաղացմանը քաղաքացիական ծառայության, նախարարությունների և կառավարության վերին օղակներում:
- Օրենսդիր մարմիններում ստեղծել կանանց միություններ, որոնք կաշխատեն օրենսդրության վրա՝ ստեղծելով նաև միջխմբակցական դաշինքներ որոշակի խնդիրների շուրջ:
- Սատարել այն օրենսդրությանը, որը պահպանում է կանանց լիիրավ հավասարությունը և արգելում է կանանց նկատմամբ խտրականությունը՝ կառավարության ծառայողների վարձման և առաջաջաման գործընթացներում:
- Հիմնել, հզորացնել և ֆինանսավորել կանանց գրասենյակներ յուրաքանչյուր վարչությունում, նախարարությունում կամ գործակալությունում, որոնք կմշակեն կանանց կարիքները հաշվի առնող գործողությունների պլան և օրինագծեր:
- Մշակել և ընդունել ազգային բյուջետավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն կառավարության գործակալություններին համապատասխան ֆինանսներով կանանց հարցերին առնչվող նախաձեռնություններին աջակցելու համար:
- Հվաքագրել և տարածել ազգային, շրջանային և տեղական մակարդակների պետական հաստատություններում կանանց մասնակցության մասին տվյալները (օրինակ՝ կառավարությունում ներկայացված կանանց թվի մասին զեկուցագրեր): Հանձնարարել կառավարության որևէ գործակալությանը կամ վարչությանը տեղեկատվությունը հավաքագրել և ամեն տարի իրականացնել քայլեր՝ վիճակագրական տվյալները բարելավելու ուղղությամբ: Իշխանությունները պետք է հաշվի առնեն այս գործընթացների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող անկախ գնահատման արդյունքները:
- ՁԼՄ-ների և այլ քաղաքացիական կրթման ռեսուրսների միջոցով իրազեկել հասարակությանը կառավարությունում կանանց ներգրավվածության կարևորության մասին:
- Մշակել երեխաների, մեծահասակների և ընտանեկան խնամքին ուղղված այնպիսի օրենսդրություն, որը կաջակցի կառավարությունում աշխատող կանանց:
- Համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ՝ կին առաջնորդներ կրթելու և օրենսդրական նախաձեռնությունների շուրջ դաշինքներ կազմելու նպատակով:
- Ստեղծել մեխանիզմներ՝ չափելու և նվազեցնելու կանանց և տղամարդկանց միջև քանակական տարբերությունը կառավարությունում:

Որպես քաղաքական կուսակցությունների առաջնորդներ, մենք հաստատական շարունակելու ենք պայքարել հանուն կանանց մասնակցության բարձրացման և աշխատելու ենք այլ կուսակցությունների և՛ կին, և՛ տղամարդ ղեկավարների հետ, որպեսզի մեր կուսակցություններն հնարավորինս նպաստեն կանանց մասնակցությանն առնչվող խոչընդոտների վերացմանը: